ԻՐԱԴԱՐԶԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՀՏԴ 338.48
DOI 10.56246/18294480-2022.12-12

ՔԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ սերվիսի ամբիոնի դասախոս
էլփոստ՝ sargis.qelyan@mail.ru
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԹԵՐԵԶԱ
ԵՊՀ սերվիսի ամբիոնի մագիստրոս
էլփոստ՝ tereza.hovsepyan@ysu.am

Իրադարձությունները մարդկանց կյանքում կարող են վերաբերել տարբեր ոլորտների՝ մշակույթ, սպորտ, բիզնես և այլն: Իրադարձային զբոսաշրջության վառ օրինակներ են օլիմպիադաները, տարբեր չեմպիոնատներ, փառատոներ, տոնահանդեսներ, տնտեսական տարբեր ֆորումներ և այլն:

Վերջին տարիների ընթացքում աննախադեպ մեծացել է Հայաստան այցելող արտասահմանցի, հիմնականում եվրոպացի զբոսաշրջիկների թիվը, որը վկայում է զբոսաշրջության զարգացման մեծ հնարավորությունների մասին: Ի վերջո, շատ չեն աշխարհում նման փոքր անկյունները, ուր կողք-կողքի գտնվում են մի քանի հազար տարվա քաղաքակրթության մասին վկայող բազմազան հուշարձաններն ու թանգարանները:

Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորման շարունակական կատարելագործմանը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երկրի զբոսաշրջության կայուն աճն ու զարգացումն ապահովելու համար խիստ կարևորվում է իրադարձային միջոցառումների կազմակերպումը:

Իրադարձային զբոսաշրջության մեջ կարևոր տեղ են գրավում նաև տարբեր տեսակի փառատոները: Դրա վառ օրինակ է հանդիսանում

Երևանում անցկացվող ամենամյա կինոփառատոնը, որը հիմնադրվել է 2004 թվականին «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի, կինոգետների և կինոլրագրողների հայկական ասոցիացիայի կողմից և անցկացվում է հուլիսին:

Հայաստանի զբոսաշրջային արդյունքի՝ համաշխարհային շուկայում ներկայացման հիմնական ձևերից է մասնակցությունը միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին: Գովազդային-տեղեկատվական նյութերի առկայությունը հնարավորություն է տալիս Հայաստանի զբոսաշրջային արդյունքն ազգային մակարդակով ներկայացնելու և գովազդելու միջազգային ցուցահանդեսներում, տոնավաճառներում, համաժողովներում և ոլորտի մի շարք այլ միջոցառումների ժամանակ:

Բանալի բառեր՝ *իրադարձություն, փառատոն, գործարար, զբոսաշրջություն, էկոտուրիզմ, բիզնես միջվայր, գովազդային տեղեկատվություն, միջազգային ցուցահանդես:*

Խնդրի դրվածքը: Զբոսաշրջությունը մեծ դեր է կատարում երկրի ներքին համախառն արդյունքի, աշխատանքի զբաղվածության մեծացման, բնական և հասարակական կարողությունների օգտագործման, առանձին տարածաշրջանների, բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ: Մեծ է զբոսաշրջության դերը մշակութային ժառանգության գնահատման, հայրենասիրության դաստիարակության, միջմշակութային հաղորդակցության զարգացման գործում:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը: Հետազոտության ընթացքում օգտագործվել է Է. Բ. Ալակի, Յու. Գ. Սաուշկինի, Գոլուբչիկի և այլ հեղինակների կողմից առաջարկվող տարածականության, որոշակիության, համալիրային, գլոբալացման և այլ մեթոդներ ու մոտեցումներ [1,2]:

Իրադարձությունները մարդկանց կյանքում կարող են վերաբերել տարբեր ոլորտների՝ մշակույթին, սպորտին, բիզնեսին և այլ:

Իրադարձային զբոսաշրջության վառ օրինակներ են օլիմպիադաները, տարբեր տեսակի մրցույթները, փառատոները, տոնահանդեսները, տնտեսական ֆորումները և այլն:

Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել

համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորման շարունակական կատարելագործմանը: ՀՀ-ում զբոսաշրջության կարևոր ուղղություններից մեկը ձմեռայինն է:

Ակնկալվում է, որ այսուհետ Հայաստանի ձմեռային զբոսաշրջությունը էլ ավելի գրավիչ կդառնա ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա զբոսաշրջիկների համար, քանի որ բացի Ծաղկաձորից՝ ձմեռային զբոսաշրջությունը զարգանում է նաև Ջերմուկ քաղաքում: Ջերմուկում ևս սկսել են ձևավորվել ենթակառուցվածքներ ձմեռային զբոսաշրջության զարգացման համար: Դահուկասպորտի զարգացման համար արդեն կառուցվել է նմանատիպ ճոպանուղի: Ջերմուկը այլընտրանք կհանդիսանա Ծաղկաձորի նկատմամբ: Այս պարագայում կառաջանա նաև մրցակցություն, որը կհանգեցնի թե՛ գների կարգավորմանը և թե՛ մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Ծաղկաձորն իսկապես գրավիչ է դառնում զբոսաշրջիկների համար. թե օրական քանի զբոսաշրջիկ է Ծաղկաձոր այցելում, հստակ վիճակագրություն չկա: Սակայն ձմռան ամիսներին դեպի այս քաղաք զբոսաշրջիկների հոսքը մեծապես պայմանավորված է նաև դահուկասահքի, ճոպանուղու վերակառուցման և առատ ձյան հանգամանքով, որը նույնիսկ ստիպում է զբոսաշրջիկներին երկարաձգել սեզոնային հանգստի ժամկետը: Բացի տեղացիներից՝ Ծաղկաձոր են այցելում զբոսաշրջիկներ նաև ԱՊՀ և եվրոպական երկրներից: Հանգստյան տների աշխատակիցները հավաստիացրին, որ հատկապես հունվար ամսին մեծանում է օտարերկրյա զբոսաշրջիկների հոսքը:

Կառավարության որոշմամբ՝ Ծաղկաձորն անցյալ տարի հայտարարվել է զբոսաշրջության կենտրոն և իր ենթակառուցվածքներով, ծառայություններով այդ ծրագրի իրականացման շրջանակներում հասել է այն մակարդակին, որ կարող է համարվել զբոսաշրջության զարգացման կենտրոն: Ձմեռային զբոսաշրջությունն ապրում է զարգացում, ինչը նշանակում է, որ Հայաստանում զբոսաշրջային սեզոնը երկարաձգելու ուղղությամբ վարվող քաղաքականությունը կարելի է հաջողված համարել:

Նախատեսվում է Արագածը նույնպես դարձնել ձմեռային զբոսաշրջության վայր՝ նպատակ ունենալով Հայաստանը դարձնել Ալպերի նկատմամբ այլընտրանքային ձմեռային զբոսաշրության կենտրոն:

Իրադարձային զբոսաշրջյան համար զբոսաշրջիկները այցելում են հիմ-

նականում Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից, Իրանից եվրոպական երկրներից, ԱՄՆ-ից, ինչպես նաև Ճապոնիայից և հեռավոր երկրներից: Սակայն հիմնական երկրներ են հանդիսանում՝ Ռուսաստանը, Իրանն ու Վրաստանը:

Հատուկ ուշադրության է արժանի էկոզբոսաշրջությունը, որը Հայաստանում համեմատաբար նոր հասկացություն է: Այն իր հիմքում ունի բնության գրկում ճանապարհորդելու գաղափար: Այս գաղափարը, սակայն, ավելի լայն է, քան պարզապես մի ճանապարհորդություն և ընդգրկում է կյանքի բոլոր կողմերը՝ կենդանական և բուսական աշխարհը, բնության ամբողջ բազմազանությունը, բնապահպանությունը, ավանդույթները և սովորույթները, մշակույթը, հասարակությունը և մարդուն: Էկոզբոսաշրջությունը ճանապարհորդություն է այն վայրերը, ուր շատ թե քիչ պահպանված է անաղարտ բնությունը: Այդպիսի ճանապարհորդությունները չեն խախտում էկոլոգիական համակարգերի ամբողջականությունը: Դրանք հիմնականում տվյալ տարածքի բնական և մշակութային-ազգագրական առանձնահատկությունների մասին պատկերացում ստանալու նպատակ են հետապնդում: Միաժամանակ էկոզբոսաշրջությունը յուրահատուկ մի միջոց է տեղացիների համար բնության պահպանությունը շահավետ դարձնելու համար: Այսինքն՝ էկոզբոսաշրջությունը դեպի բնություն կողմնորոշված զբոսաշրջությոան ձև է և միաժամանակ բնության պաշտպանություն: էկոզբոսաշրջությունը լավ գործ է, եթե հաշվի է առնվում, թե ինչ էկոլոգիական հետք են թողնում զբոսաշրջիկները, էկոզբոսավարը պետք է հաշվի առնի նաև տեղացիների սեփականության իրավունքը, և նրանց պետք է տրվի եկամուտների մի մասը:

Էկոզբոսաշրջությունը զարգացմանը նպաստում է նաև զբոսաշրջային գործակալությունների հաճախորդների ցանկությունը՝ ստանալ նոր և անկրկնելի տպավորություններ, նպաստել բնության պահպանմանը, զանգվածային զբոսաշրջության նկատմամբ հետաքրքրության նվազմանը:

Վերջին տարիների ընթացքում աննախադեպ մեծացել է Հայաստան այցելող արտասահմանցի, հիմնականում եվրոպացի զբոսաշրջիկների թիվը, որը վկայում է զբոսաշրջության զարգացման մեծ հնարավորությունների մասին: Ի վերջո, շատ չեն աշխարհում նման փոքրի անկյունները, ուր կողք կողքի գտնվում են մի քանի հազար տարվա քաղաքակրթության մասին վկայող բազմազան հուշարձաններն ու թանգարանները:

Իրադարձային զբոսաշրջության մեջ կարևոր տեղ են գրավում նաև տարբեր տեսակի փառատոնները: Դրա վառ օրինակ է հանդիսանում

Երևանում անցկացվող ամենամյա ամենամեծ կինոփառատոնը, որը հիմնադրվել է 2004 թվականին «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի, կինոգետների և կինոլրագրողների հայկական ասոցիացիայի կողմից և անցկացվում է հուլիսին: Փառատոնն ամեն տարի ներկայացնում է 120-150 ֆիլմեր՝ մրցութային և արտամրցութային տարբեր ծրագրերով: Վերջին տարիներին փառատոնը նաև Հայաստանում ամենաակտիվ լուսաբանվող իրադարձություններից է: Փառատոնի բացման արարողության ժամանակ տեղի է ունենում արդեն ավանդական դարձած ծիրանօրհնեք:

Կարևոր միջոցառումներից է նաև «Էրեբունի-Երևան» տոնը, որը կոչվում է նաև «Երևանի տոն», «Երևանի օր»:

Փառատոնները լավ հնարավորություն են նաև արտաքին շուկային ներկայացնել հայկական արտադրությունն ու ավանդույթները:

Գինու փառատոնը անցկացվում է Վայոց ձորի մարզում հոկտեմբերի առաջին կիրակի օրը: Խոր Վիրապում անցկացվում է «Լավաշի փառատոն», որի ընթացքում հացթուխները ցուցադրում են լավաշի պատրաստման ընթացքը, սովորեցնում թխման ճիշտ կարգը, կազմակերպում լավաշի և ավանդական հաց ու պանրի, ինչպես նաև ժենգյալով հացի հյուրասիրություն: Հնչում են ժողովրդական և էստրադային երգեր ու պարեր, տեղի են ունենում ավանդական, ժողովրդական խաղերի կազմակերպում, մրցանակաբաշխություն, Գավառում կազմակերպվում է «Փռի» տոն, կազմակերպվում է նաև «Տոլմայի փառատոն» Արարատի մարզի Հնաբերդ գյուղում, «Խորովածի փառատոն»՝ Լոռու մարզում և այլն:

Զբոսաշրջության և հանգստի վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ ներգնա զբոսաշրջությունը զգալի ազդեցություն է ունենում հանրապետությունում բիզնես միջավայրի ակտիվացման, բնակչության զբաղվածության մեծացման, տարաբնույթ ենթակառուցվածքների զարգացման, արտարժույթի ներհոսքի, մշակութային կյանքի աշխուժացման, մարզական և երիտասարդական միջոցառումների ակտիվացման վրա:

Աննախադեպ մեծացել է Հայաստան այցելող արտասահմանցի, հիմնականում եվրոպացի զբոսաշրջիկների թիվը, ինչը վկայում է զբոսաշրջության զարգացման մեր մեծ հնարավորությունների մասին:

Համաշխարհային զբոսաշրջության զարգացման միտումների և նախորդ տարիների ընթացքում Հայաստանում զբոսաշրջության զարգացման պետական ծրագրերի իրականացման արդյունքների վերլուծությունը ցույց է

տալիս, որ զբոսաշրջության զարգացման ծրագրի նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ հիմնական խնդիրների լուծմամբ:

1. զբոսաշրջության բնագավառում արդյունավետ մարքետինգային քաղաքականության իրականացում, միջազգային զբոսաշրջային շուկայում հայրենական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում,

2. համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի ինտեգրում, ակտիվ և արդյունավետ միջազգային համագործակցություն:

Նախատեսված ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է հետևյալ հիմնական ուղղությունները.

1. զբոսաշրջության ոլորտում մարքեթինգային քաղաքականության իրականացում, գովազդային-տեղեկատվական ապահովման համակարգի շարունակական զարգացում և կատարելագործում,

2. զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության ծավալում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, Հայաստանի զբոսաշրջային արդյունքը համաշխարհային շուկայում ներկայացման հիմնական ձևերից է միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների մասնակցությունը: Գովազդային-տեղեկատվական նյութերի առկայությունը հնարավորություն է տալիս Հայաստանի զբոսաշրջային արդյունքն ազգային մակարդակով ներկայացնելու և գովազդելու միջազգային ցուցահանդեսներում, տոնավաճառներում, համաժողովներում և ոլորտի մի շարք այլ միջոցառումների ժամանակ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երկրի զբոսաշրջության կայուն աճն ու զարգացումն ապահովելու համար խիստ կարևորվում է իրադարձային միջոցառումների կազմակերպումը:

Միջոցառումների հիմնական նպատակը հայկական մշակույթի, սովորույթների, պատմական ժառանգության և զբոսաշրջիկներին հետաքրքրող այն ամենը ներկայացնելն է, որը հետագայում օտարերկրյա այցելուները ներակայացնում են իրենց երկրում: Հայաստանը՝ զբոսաշրջության համար գրավիչ երկիր գովազդելու ևս մեկ միջոց է: Այսպիսի այցերի կազմակերպումը նպաստում է Հայաստանի զբոսաշրջության մասին իրազեկության բարձրացմանը և օտարերկրյա զբոսաշրջիկին դեպի Հայաստան գրավելուն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աշխարհագրության արվեստն ու գիտությունը, Երևան 2007, էջ 33
2. Голубчик М. М., Файбусович Э. Л., Носонов А. М., Макар С. И., Экономическая и социальная география // М., ВЛАДОС, 2004
3. Роберт Уотсон, Джеймс П. Лип, Экотуризм - Путь в перед. В. кн. Планета земля: Будущее // Санкт-Петербург, АМФОРА, 2008, С. 223.
4. http://www.gdrc.org,/uem-tour
5. http://www.//hywikipedia, org/wiki.

EVENT TOURISM OPPORTUNITIES IN ARMENIA

KELYAN SARGIS
Candidate of Technical ScienceS, Associate Professor,
Professor at the Chair of Service, YSU
e-mail: sargis.qelyan@mail.ru
HOVSEPYAN TEREZA
Master Student at the Department of Service, YSU
e-mail: tereza.hovsepyan@ysu.am

Events in people's lives can be related to different spheres: culture, sports, business, etc. Bright examples of event tourism are the Olympics, various championships, festivals, carnivals, various economic forums, etc.

In recent years, the number of foreign tourists visiting Armenia, mainly Europeans, has increased to an unprecedented level, which testifies to the great opportunities for tourism development. After all, there are not many small corners of the world, where side by side there are various monuments and museums that testify to several thousand years of civilization.

Within the framework of the tourism marketing policy, the program activities were mainly aimed at the continuous improvement of the image of Armenia as a favorable and attractive country for tourism in the world market.

International experience shows that it is very important to organize events to ensure the sustainable growth and development of the country's tourism.

Various festivals also play an important role in event tourism. A vivid example of this is the largest annual film festival in Yerevan, which was founded in 2004 by the Golden Apricot Film Development Foundation and the Armenian Association of Film Critics and is held in July.

Participation in prestigious international tourism exhibitions is one of the main ways of presenting Armenia's tourism product in the world market. The availability of advertising and information materials allows to present the tourism product of Armenia at the national level, to advertise at international exhibitions, fairs, conferences, and a number of other events in the field.

Keywords: *Event, festival, business, tourism, ecotourism, business environment, advertising information, international exhibition.*

ВОЗМОЖНОСТИ СОБЫТИЙНОГО ТУРИЗМА В АРМЕНИИ

КЕЛЯН САРГИС
Кандидат технических наук, доцент,
Доцент кафедры сервиса ЕГУ
электронная почта: sargis.qelyan@mail.ru
ОВСЕПЯН ТЕРЕЗА
Магистрант кафедры сервиса ЕГУ
электронная почта: tereza.hovsepyan@ysu.am

События в жизни людей могут относиться к разным сферам: культуре, спорту, бизнесу и др. Яркими примерами событийного туризма являются Олимпиады, различные чемпионаты, фестивали, карнавалы, различные экономические форумы и др.

В последние годы количество иностранных туристов, посещающих Армению, в основном европейцев, возросло до беспрецедентного уровня, что свидетельствует о больших возможностях для развития туризма. Ведь не так много таких маленьких уголков мира, где рядом стоят различные памятники и музеи, свидетельствующие о нескольких тысячах лет существования цивилизации.

В рамках маркетинговой политики туризма деятельность программы в основном была направлена на постоянное улучшение имиджа Армении как благоприятной и привлекательной для туризма страны на мировом рынке.

Международный опыт показывает, что очень важно организовывать мероприятия для обеспечения устойчивого роста и развития туризма в стране.

Различные фестивали также играют важную роль в событийном туризме. Ярким примером тому является крупнейший ежегодный кинофестиваль в Ереване, который был основан в 2004 году Фондом развития кино «Золотой абрикос» и Армянской ассоциацией кинокритиков и проводится в июле.

Участие в престижных международных туристических выставках является одним из основных способов представления туристического продукта Армении на мировом рынке. Наличие рекламно-информационных материалов позволяет представлять туристический продукт Армении на национальном уровне, размещать рекламу на международных выставках, ярмарках, конференциях и ряде других мероприятий в сфере.

Ключевые слова: *событие, фестиваль, бизнес, туризм, экотуризм, деловая среда, рекламная информация, международная выставка.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 14.03.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 20.03.2022թ.: